



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 27 ՄԱՐՏ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 26

ԱՐԴԱՐ ՄԱՐԴՈՒՆ ԽՆԴՐԱՆՔԸ

Արդարութիւն ըրէ ինձի, Տէր, անմեղ եմ ես.
քեզի՝ Տիրոջ վարահեցայ, եւ պիտի չսասանիմ:
Փորձէ զիս, Տէր, քննէ զիս, քու կրակովդ փորձէ
ցանկութիւնները սրբիս եւ խորհուրդները մտքիս:
Որովհետեւ ողորմութիւնդ չհանեցի եւ միտքեւ,
եւ ապրեցայ՝ միշտ քեզի հաւատարիմ մնալով:
Անպէտ մարդոց ընկերութիւն չըրի եւ,
կեղծաւորին հետ բնաւ գործ չունեցայ:
Արեցի միշտ հաւաքոյթը չարերուն.
ամբարիշտին հետ բարեկամ եւ չեղայ:
Որպէս նշան անմեղութեան՝ պիտի լուսմ ձեռքերս,
եւ սեղանիդ շուրջ դառնալով սպասարկեմ քեզի, Տէր:
Գոհութեան երգ պիտի երգեմ եւ քեզի,
եւ քու բոլոր սքանչելի գործերդ պիտի թուեմ:
Տէր, կը սիրեմ քանդ վայելչութիւնը,
այս յարկին՝ ուր քու փառքդ կը բնակի:
Ամբարիշտներուն եւ ոճրագործին հետը միասին
զիս կորուստի մի դատարարարեր:
Անօրէնութեամբ լի են անոնց գործերը,
եւ անոնց ձեռքը՝ կաշառքով լեցուն:
Բայց անմեղ եմ եւ, ողորմէ ինձի եւ փրկէ զիս, Տէր:
Անսայթաք պահէ իմ քայլերս միշտ,
եւ ես խմբուած ժողովուրդիդ հետ քեզ պիտի օրհնաբանեմ:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐԹ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ էո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ԱՐԴԱՐ ՄԱՐԴՈՒՆ ԽՆԴՐԱՆԶԸ

Տարբեր առիթի, փարբեր վիճակի մէջ Դաւիթ իր աղօթքը կը բարձրացնէ առ Աստուած, որպէսզի անկէ խնդրէ ողորմութիւն, օգնութիւն, փրկութիւն եւ արդարութիւն: Վիճակ մը, որուն մէջէն անպայմանօրէն կանցնի իւրաքանչիւր մարդ արարած: Ահա Դաւիթ ինք կը դառնայ ներկայացուցիչը եւ կու տայ մեզի առիթը եւ կը յիշեցնէ, թէ այդպիսի պարագաներու մէջ ինչ բառեր կրնանք օգտագործել: Որովհետեւ այդպիսի դժուարին պայմաններու փակ, յաճախ մարդուս միտքը կ'անճրկի, կը դժուարանայ բառեր գտնելու եւ արտայայտուելու: Այս Սաղմոսի բառերը կը յիշեցնեն այն պարագան որ Դաւիթ կացութեան մը մէջ է, ուր կ'ուզէ արդարանալ, որովհետեւ ի գուր փեղ գրպարպեր են զինքը: Պահ մը երեւակայեցէք երբ կանչուինք դատարարին, ուր մեզ գրպարպած ըլլան այս կամ այն յանցանքով, որ սակայն մենք չենք գործած: Ի՞նչ ենք ընելու, եթէ ոչ պիտի փորձենք մենք զմեզ արդարանցնել: Բայց ով կը հաւաքայ արդեօք մեր խօսքին: Ահա նոյն վիճակին մէջ Դաւիթ ինք, բայց ան կը դիմէ Աստուծոյ: Աստուծմէ կը խնդրէ իր արդարացումը, որովհետեւ մարդկային դատողութիւնը, մարդկային արժէչափերը փարբեր են:

Առաջին բառերը յարակօրէն ցոյց կու տան այդ խնդրանքը, որ ինք ապաւինած է Աստուծոյ եւ Աստուծմէ կը սպասէ, Անկէ կը խնդրէ իր արդարացումը: Երբ կ'ըսէ. «Արդար եմ», արդար է փուռալ մեղադրանքին համար, որ ինք չէ գործած: Եւ ոչ թէ ընդհանրապէս արդար է, որովհետեւ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ, «Մէկ իսկ հոգի չկայ արդար, բոլորն ալ մեղքի փակ իյնկան»: Ահա ամբողջական վստահութեամբ Տիրոջ ապաւինած, եւ Աստուծմէ կը խնդրէ, որ Աստուած Ինք զննէ, քննէ, փրձէ զինք: Եւ ինչով փորձէ, նոյնինքն Աստուծոյ կրակով: Կրակ մը որ գտող է, մաքրող է, քննող է, եւ միեւնոյն ժամանակ լուսաւորող է: Ի՞նչն է զննելու, փորձելու եւ քննելու, սրբին ցանկութիւնները եւ մաքրին խորհուրդները: Հեղափոխականօրէն, անոնք են որ յետոյ գործի պիտի անցնին: Ամէն բանէ առաջ մեր սրբին ու մաքրին մէջ է որ փեղի կ'ունենայ այդ գործողութիւնը, ցանկութեան, խորհուրդներու, ապա այդ ցանկութիւններն ու խորհուրդները կեանքի կը կոչուին: Ահա թէ ինչու՞՞: Ներսէս Շնորհալի հայրապետը կ'աղօթէ ըսելով. «Իմաստութիւն փուր, որպէսզի ըստ այնմ խորհիմ, խօսիմ եւ գործեմ»: Աստուծմէ կը խնդրէ որ զննէ, քննէ, որպէսզի փեսնէ թէ այդպիսին չէ, եւ կամ եթէ նոյնիսկ այդպիսի բաներու նշուլ ալ կայ, թող որ Աստուծոյ կրակը մաքրէ, գրէ: Որովհետեւ իրապէս մարդուս սիրտը, միտքը, անոր ցանկութիւններն ու խորհուրդները զննողը Աստուած ինք է: Պօղոս Առաքեալ դարձեալ պիտի ըսէ. «Աստուծոյ խօսքը երկասյրի սուր է, որ կը թափանցէ մինչեւ մարդուս ծուծը, եւ կը քննէ անոր խորհուրդները»: Այնպէս ինչպէս մեր Տէրը Յիսուս Բրիսպոս գիտեր մարդոց խորհուրդները, ու անոնց մտածումները: Ահա այս իսկ պարզառով, Դաւիթ կ'ուզէ որ Աստուած Ինք ըլլայ Դատարարը, որովհետեւ արդար Դատարար է: Սա կը յիշեցնէ նաեւ այն պարագան, որ մենք ալ յաճախ մեր անձերուն կամ մեր նմաններուն նկատմամբ խիստ կ'ըլլանք եւ այդպէս ալ դատաստան կ'ուզենք փեսնել, մոռնալով որ մեր դատողութիւնները խախտու են, փակաւին չըսելու համար թերի, սխալ: Առաւել եւս Աստուծոյ կը դիմէ, որովհետեւ ան երբեք իր մտքէն չհանց ու չէ հանած Աստուծոյ ողորմած ըլլալը: Որովհետեւ այդ ողորմութեան համաձայն է նաեւ մեր արդարացումը: Դարձեալ Սր. Ներսէս Շնորհալի հայրապետը պիտի ըսէ. «Արդարութեամբ մի դատեր, այլ գթութեամբ քաւէ մեր յանցանքները»:

Ապա Դաւիթ կը յիշէ մարդոց փարբեր խաւերը, անպէտ մարդիկ, որոնց հետ ընկերութիւն չըրաւ, կեղծաւորին հետ բնաւ գործ չունեցաւ, չարերուն հաւաքոյթին մաս չի կազմեց, ամբարիշտին հետ բարեկամ չեղաւ: Այս թուումները կ'ընէ, ոչ թէ ինքզինք ատելի արդար ցոյց տալու, այլ՝ արդարութեան կողմը ըլլալու, եւ այդ իմաստով ալ հեռու մնալու այդպիսի մարդոցմէ: Առաջին Սաղմոսն ալ այդպէս պիտի արտայայտուի ըսելով. «Երանելի է այն մարդը որ ամբարիշտներուն խորհուրդին, մեղաւորներուն ապրելակերպին, եւ զԱստուած ծաղրողներուն հետ ընկերութիւն չ'ընէ»:

Ահա որպէս նշան այդ անմեղութեան, Դաւիթ իր ձեռքերը կը լուայ, անով ցոյց տալու, ու մանաւանդ մեր պարագային անով յիշելու, թէ այդ լուացումը նաեւ մեր մկրտութեամբ լուացումն է, որ մեր մեղքերէն արդարացանք: Երկրորդ նշան, Աստուծոյ սեղանին շուրջ ըլլալու ու Անոր սպասարկելու: Երրորդ նշան գոհութեան երգ երգելու, եւ Աստուծոյ սքանչելի թուելու, պատմելու եւ այդ բոլորի մասին վկայութիւն տալու: Ի վերջոյ կ'անդրադառնայ Տիրոջ փան գեղեցկութեան, եւ այդ փան գեղեցկութիւնը Աստուծոյ ներկայութեան ու Անոր փառքին պարզառով: Որովհետեւ այդ փան գեղեցկութիւնը շինարարական գեղեցկութիւնը չէ, այնքան որքան Աստուծոյ ներկայութիւնը: Առաւել եւս, Աստուծոյ փան գեղեցկութիւնը նաեւ այնպէս հաւաքում հաւաքացեալներու ներկայութիւնը:

Ի վերջոյ, Դաւիթ դարձեալ կը խնդրէ Աստուծմէ, որ զինք պահէ, ամբարիշտներուն հետ կորուստի չմտնէ, ու մանաւանդ՝ ողորմի իրեն, եւ ահա Աստուծոյ ժողովուրդին հետ միասին զԱստուած օրհնաբանէ: